Զալալեդդինի արշավանքներից յերկիրը շունչ չառած, յերևացին ավելի սոսկալի թշնամիներ՝ Թաթարները. նոքա մի անգամ արդեն յերևացել եյին Հայաստանի սահմաններում և 1220 թ. ընդհարվել Վրաց և Հայոց զորքերի հետ Իվանեի առաջնորդությամբ *; կրկին յերևացել 1231 թ. իբրև Զալալեդդինի հալածողներ. 1232/3 թ. նոքա կործանում են Գանձակը **. իսկ կարգավորյալ արշավանք դեպի Հայաստան սկսում են 1235/6 թ. թ.[1]: Գանձակից հետո հետզհետե Թաթարների ձեռքն անցան հայ իշխանություններն իրենց կենդրոններով և բերդերով, նախապես բաժանելով իրենց մեջ յուրաքանչյուր գնդի նվաճելիք մասերը: Հայ իշխաններն անպատրաստ, յուրաքանչյուրն յուր անձի պահպանության մասին եր միայն մտածում. Վահրամ յուր վորդի Աղբուղայի հետ թափառում եր անծանոթ վայրերում՝ Շամքորն ու մնացած բերդերը բաղդին թողած. Զաքարե մեծի վորդին Շահնշահ՝ Լոռին հանձնելով յուր անարներին, ինքն ամրացավ վորդիների հետ ձորերում և այրերում. Իվանեի վորդի Ավագը, վոր մեծ իշխանն եր, ամրացավ Կայենո բերդում, Ելիկում Որբելյանը Հրաշկաբերդում: Զարմանալի է, վոր միահամուռ ուժերով Թաթարներին վոչ մի դիմադրություն ցույց չտրվեցավ. Վրաց արքայական գահի վրա նստած եր Ռուզուդանը, վոր չուներ Թամարի շնորհքն ու բաղդը և յերկիրը կառավարում եր հայ իշխանների ձեռքով[2] իսկ սրանք ել Զալալեդդինի արշավանքներով թուլացած, թե մի հզոր և միացնող ձեռքի պակասության պատճառով, յերբեք չփորձեցին միահամուռ ընդդիմության մի վոր և է փորձ անել. ուստի և Հայոց բերդերն ու իշխանություններն ըստ Վարդանի[3] «ի սուղ ժամանակս անվաստակ և առանց աշխատության» անցան Թաթարների ձեռքը. «զի ոչ ոք եր, որ ընդդէմ կայր նոցա կամ պատերազմէր ընդ նոսա», գրում է Գանձակեցին[4]. հոգեբանական մի տարտամ վիճակ, յեռանդի ու գործունեության կատարյալ մի անկում հայ և վրացի իշխանությունների կողմից: Յեվ այս յերևույթը նկատվում է վոչ միայն քրիստոնյա, այլ և Առաջավոր – Ասիայի մահմեդական պետությունների մեջ. Թաթարական հեղեղի սարսափն ավելի մեծ եր, քան իրոք պետք եր սպասել: Վերին աստիճանի հետաքրքրական է և ընորոշ դիմադրության բացակայության հոգեբանական այն վիճակը, վոր առասպելանման մի քանի պատմություններով պատկերացնում է մահմեդականների մեջ Իբն ալ—Ասիր *. Թաթար մի զորական կարող եր միայնակ մտնել մի գյուղ, բազմությունից սպանել մի քանիսը, առանց հանդիպելու նրանց կողմից վոր և է պաշտպանության. անգեն Թաթարը կարող եր հրամայել. «գլուխդ դիր գետնի վրա

Սկզբնաղարդ Ձեռ. Ս. Էջմ. № 182/206. **Պատկեր 27.**

և մի շարժվիր», մինչև սուր ձեռք բերեր նորա գլուխը կտրելու: Մասամբ այս սարսափով պետք է բացատրել, վոր Թաթարական 30000-անոց մի բանակի առաջ առանց այլ և այլության խոնարհվում եյին ազգեր ու պետություններ, վորոնք կրկնակի ույժ կարող եյին հանել նրանց դեմ. Թաթարական խիզախությունն ու անգթությունը միացած իրենց հաջողության հավատի հետ անպարտելի եր կացուցանում նրանց ազգերի աչքում, նրանց յերևույթը աստվածառաք մի պատիժ ընդունվում, վոր նախատեսված եր վաղ ժամանակից **:

---

* Գանձակեցի 190.

** Գանձակի առումը հիշված է Վանենու Հաւաքածուին նվիրած ավետարանի հիշատակարանի մեջ (Հավել. Բ. 3). «Ցայսմ ամի եկն ազգն նետողաց, եւ զը! մայրաքաղաքն Գանձակ հիմն ի վեր արարեալ, կոտորեաց զմարդ և զանասուն եւ զրաղումս ի քրիստոնէիցն»:

1 Թաթարների արշավանքը Վարդան (189) նշանակում է 1235 թ. իսկ Որբէլեան (402), Այրիվանեցին (66) և մի անհայտ, բայց Այրարատի և Անիի նվաճման ականատես հեղինակ (Նշխարք մատենագրութեան Հայոց. Բ. Պատկանեան: Սպ. 1884, յեր. 71) 1236 թվին. տես և Ալիշան. Շիրակ յեր. 102.

2 Գանձակեցի. 224:

3 Վարդան. 109:

4 Գանձակեցի. 240:

* A. Müller. Der Islam. II. Berlin, *1887. 226.* Мюллер. История Ислама. III. 244—246.

** Գանձակեցի. 218. Վարդան վարդապետ. Հիշատակարան Միքայել Ասորու հայերեն թարգմանության. Ցուցակ Հայերեն Ձեռագիրների Ներսիսյան դպրանոցի.